Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ << ՀՀ Արարատի մարզի Նոր կյանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ – ի <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայից՝ 2 դասաժամ,<< Տեխնոլոգիա>> առարկայից՝ 2 դասաժամ, <<Մաթեմատիկա>> առարկայից՝ 17 դասաժամ, <<Կերպարվեստ >> առարկայից՝ 2 դասաժամ , << Երաժշտություն >> առարկայից՝ 2 դասաժամ,<< Հայոց պատմություն>> առարկայից՝ 1.5 դասաժամ , <<Իմ հայրենիքը>> առարկայից՝ 2 դասաժամ, <<Իմ հայրենիքը և աշխարհը>> առարկայից՝ 2 դասաժամ, <<Հասարակագիտություն>> առարկայից՝ 2 դասաժամ, <<Համաշխարհային պատմություն >> առարկայից՝ 1 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) "Հանրակրթության մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնումէ մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2024թ.-ի հոկտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-15^{00}, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա կունենա 2024թ. –ի հոկտեմբերի 28-ին՝ ժամը14^{00} – ին, ՀՀ Արարատի մարզի Նոր կյանքի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ Չարենցի 7, հեռախոս՝ 094-00-87-87: